**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9 -1**

ք. Երևան «____» ___________ 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Վահե Տեր-Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման և ցանցի կառավարման ծրագրային ապահովման ծառայությունների** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 006 000 (ինը միլիոն վեց հազար ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ 02505554 | «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ<br>Հասցե՝ Ք. Երևան, Պռոշյան 11 /5<br>«ԱմերիաԲանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 15700-17565410100<br>ՀՎՀՀ04718853 |
| ---------------------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |
| Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475<br>Date: 2025.12.03 16:13:51 AMT | Digitally signed by BAGHDASARYAN ARTAK 4101880220<br>Date: 2025.12.03 10:43:32 AMT |

*Հավելված N 1*
*«  »  2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 72261180/501 | Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում /Առկա էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում և ֆունկցիոնալի հավելում/հավելված 1.1 | դրամ | **4 476 000** | 1 | ք.Երևան Կոմիտասի 49/2 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 365 օրացուցային օրվա ընթացքում |
| 2 | 72511100/502 | Ցանցի կառավարման ծրագրային ապահովման ծառայություններ /Սերվերային համակարգի թարմացման, նոր համակարգերի ներդրման և համալիր պաշտպանության համակարգի ներդրման ծառայություններ/ հավելված 1.2 | դրամ | **4 530 000** | 1 | ք.Երևան, Կոմիտասի 49/2 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 365 օրացուցային օրվա ընթացքում |

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.1

| | | | |
|---|---|---|---|
| ***Չափաբաժին 1.*** Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում / Առկա էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում և ֆունկցիոնալի հավելում/ | **No** | Առկա էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում և ֆունկցիոնալի հավելում | **Բնութագիրչ** |
| | 1 | Microsoft Office 365 օնլայն հարթակի արտոնագրերի երկարացում մեկ տարով | 5 արտոնագիր |
| | 2 | Teams Տեսազանգերի համակարգի սպասարկում | 5 արտոնագիր |
| | 3 | SharePoint online էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում | 5 արտոնագիր |
| | 4 | SharePoint 2019 էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում | 50 օգտագործող |
| | 5 | Կենդանի կենդանիների կարանտինանցման գործընթացի ավտոմատացման համակարգի սպասարկում և ֆունկցիոնալ համալրում: | 10 գործառույթ |

| | | | |
|---|---|---|---|
| | 6 | ЕЭК Единый реестр համակարգի ֆունկցիոնալության ավելացում Microsoft SharePoint առցանց հարթակի վրա և սպասարկում | Երկկողմանի ինտեգրացիա |
| | 7 | Գույքագրման էլեկտրոնային համակարգի ինտեգրում և սպասարկում | 400 օգտագործողի արտոնագիր |

**Ծառայության շրջանակներում ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կատարի հետևյալ գործողությունները `**

1. Ծանոթանա կենդանի կենդանիների կարանտիանցման գործընթացին, պատրաստի և հաստատի պրոցեսների "Bule Print" տարբերակը, նախագծի և իրականացնի գործառույթները առկա MS SharePoint համակարգում:
2. Պատրաստի SS սարքավորումների գույքագրման ձևաթղթեր, հաստատելով այն SS բաժնի հետ և համակարգել գույքագրման գործընթացը:
3. Պարբերաբար կապ հաստատի "ЕЭК Единый реестр" համակարգերի նախագծողների հետ, հարցումների միջոցով պարզի ինտեգրացիայի համար անհրաժեշտ միջներեսների թարմացումները:

**Պարտադիր պահանջ՝**

1. Կատարող կազմակերպությունը պետք է հանդիսանա Microsoft CSP գործընկեր:
2. Աշխատանքները պետք է կատարվեն Microsoft 365 Certified – Teamwork Administrator Associate, Microsoft Certified: Power Platform App Maker Associate որակավորում ունեցող աշխատողների կողմից:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.2**

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| ***Չափաբաժին 2.*** Ցանցի կառավարման ծրագրային ապահովման ծառայություններ /Սերվերային համակարգի թարմացման, նոր համակարգերի ներդրման և համալիր պաշտպանության համակարգի ներդրման ծառայություններ/ | **No** | Սերվերային համակարգի թարմացման, նոր համակարգերի ներդրման և համալիր պաշտպանության համակարգի ներդրման ծառայություններ:<br>Առկա սերվերային սարքավորումների սպասարկում՝ փոշիների մաքրում, Firmware – ների և Driver – ների թարմացում, ESXi և vCenter համակարգի թարմացում, օպերացիոն համակարգերի թարմացում և սպասարկում: | **Բնութագրիչ** |
| | 1 | HPE 3PAR StoreServ 7200c 2N Fld Int Base | E7X67A |
| | 2 | HPE ProLiant DL360 Gen9 8SFF CTO | 755258-B21 |
| | 3 | HPE ProLiant DL360 Gen9 8SFF CTO | 755258-B21 |
| | 4 | HPE ProLiant DL360 Gen9 8SFF CTO | 755258-B21 |
| | 5 | HPE ProLiant DL360 Gen9 8SFF CTO | 755258-B21 |
| | 6 | HP 5500-24G EI Switch | JD377A |
| | 7 | HPE ProLiant DL60 Gen9 | 833865-B21 |
| | 8 | HPE ProLiant DL60 Gen9 | 833865-B21 |
| | **No** | **Առկա սերվերային համակարգերի սպասարկում** | |
| | 1 | Microsoft Active Directory համակարգի սպասարկում | 400 օգտագործող |
| | **2** | Microsoft Exchange փոստային համակարգի սպասարկում | 400 օգտագործող |

| | | | |
|---|---|---|---|
| | 3 | Microsoft SharePoint փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկում | 400 օգտագործող |
| | 4 | VMware vSphere համակարգի սպասարկում | 4 host, 1 VC |
| | 5 | Veeam պահուստային պատճենման համակարգի սպասարկում | 2 համակարգ |
| | 6 | Համակարգիչների օպերացիոն համակարգերի և ծրագրային փաթեթների պատրաստում, տեղադրում և տվյալների ամբողջականության պահպանում և սպասարկում | 400 համակարգիչ |
| | 7 | Վեբ սերվերների, և դոմեյն հասցեների սպասարկում | 2 սերվեր |
| | **No** | **ՏՏ անվտանգության համակարգի բաժանորդագրություն** | |
| | 1 | Նոր սերնդի հրեպատի NGFW բաժանորդագրություն՝<br>Նվազագույնը 2 հատ 1G SFP և 6 հատ GbE պղնձյա RJ 45 L3 պորտ, 15 Gbps throughput<br>Սերվերային պահարանում ներկառուցման կոմպոնենտները պարտադիր, առավելագույնը 2U<br>Երաշխիքային սպասարկման ընթացքում ցանկացած ֆիզիկական վթարի դեպքում սարքավորումը պետք է փոխարինվի առավելագույնը 4 աշխատանքային ժամվա ընթացքում:<br>**Սարքավորումը պետք է տրամադրվի, կարգաբերվի և սպասարկվի կատարողի կողմից:** | 1 հատ |
| | 2 | Intrusion Prevention System պաշտպանության արտոնագիր նվազագույնը 3 Gbps throughput | 1 հատ |
| | 3 | App control և Web control տեսակի Proxy պաշտպանություն, ներառյալ հակավիրուսային համակարգի արտոնագիր նվազագույնըի 2 Gbps throughput | 1 հատ |
| | 4 | Email Gateway պաշտպանություն և հակասպամ համակարգի արտոնագիր | 1 հատ |
| | 5 | Web Application Firewall (WAF) Revers proxy պաշտպանության, DoS և DDoS պաշտպանության արտոնագրեր նվազագույնը 200 Mbps throughput | 1 հատ |
| | 6 | VPN հեռահար միացման արտոնագիր, նվազագույնը 400 IPSEC միացման համար | 1 հատ |
| | 7 | Windows և Linux Սերվերային օպերացիոն համակարգերի համալիր հակավիրուսային պաշտպանություն, որը ինտեգրվում է վերը նշված NGFW – համակարգի հետ: | 5 արտոնագիր |

**Ծառայության շրջանակներում ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կատարի ներկայացված ցուցակում ներառվող սարքավորումների տեխնիկական սպասարկում, որոնք են՝**

1. սարքավորումների քանդում, փոշիների մաքրում, պրոֆիլակտիկ այլ աշխատանքներ՝ կապված հովացման համակարգերի հետ անխափան աշխատանքն ապահովելու նպատակով, այդ թվում՝ թերմոմածուկ, յուղեր և այլն,
2. սարքավորումների բոլոր կոմպոնենտերի խտացված ծրագիր /firmware/, թարմացում դեպի վերջին հասանելի տարբերակի,
3. սարքավորումների բոլոր կոմպոնենտերի ղեկավար ծրագիր /driver/, թարմացում դեպի վերջին հասանելի տարբերակի,
4. Hypervisor համակարգերի թարմացում դեպի վերջին հասանելի տարբերակի,
5. Թվով 10 Windows 2012R2/2008R2 օպերացիոն համակարգերի թարմացումների տեղադրում,
6. Թվով 10 Windows 2012R2/2008R2 օպերացիոն համակարգերի լոգերի վերծանում և խնդիրների շտկում,
7. կլաստերիզացման vCenter համակարգի թարմացում դեպի վերջին հասանելի տարբերակի,
8. կենտրոնական սթորիջ սարքավորման օպերացիոն համակարգի թարմացում դեպի հասանելի վերջին տարբերակին
9. Նոր ծրագրային պատկերների պատրաստում վերջին հնարավոր թարմացումներով Windows 2012R2, 2016 և 2019:

**Պարտադիր պահանջ՝**

1. Յուրաքանչյուր թարմացումից հետո պետք է կատարվեն թեստավորման աշխատանքներ:
2. Ընդհատում պահանջող բոլոր աշխատանքները պետք է կատարվեն ոչ աշխատանքային ժամերի:
3. Աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան (HPE Server Master ASE, Storage Master ASE և VMware) տեխնիկական սերտիֆիկացումներ ունեցող աշխատողների կողմից:
4. Ծառայությունը մատուցող կազմակերպությունը պետք է լինի HPE կողմից հավաստագրված գործընկեր ՀՀ տարածքում:
5. Առկա սերվերային սարքավորումների և ծրագրային ապահովումների թարմացում և սպասարկում, այդ թվում – սերվերների օպտիմիզացիա, թարմացումներ, ռոութերների կոնֆիգուրացիաներ և թերությունների ֆիքսում:
6. Ծառայությունները պետք է մատուցվեն սպասարկման 24x7 ռեժիմ-գրաֆիկով:
7. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը:
8. Ծառայությունը կարող է ակտիվանալ և ապաակտիվանալ Պատվիրատուի կողմից Կատարողին գրավոր պահանջի հիման վրա:
9. Կատարողի կողմից 24/7 աջակցում բաժանորդագրության ընթացքում, ծագած խնդիրների շտկման, նոր կոնֆիգուրացիաների կարգավորման և այլ հարցերում: Արձագանքում առավելագույնը 2 աշխատանքային ժամվա ընթացքում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ 02505554 | «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ<br>Հասցե՝ Ք. Երևան, Պռոշյան 11 /5<br>«ԱմերիաԲանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 15700-17565410100<br>ՀՎՀՀ04718853 |
| ---------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ---------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |
| Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475<br>Date: 2025.12.03 16:14:23 AMT | Digitally signed by BAGHDASARYAN ARTAK 4101880220<br>Date: 2025.12.03 10:42:00 AMT |

*Հավելված N 2*
*« » 2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261180/501 | Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 2 | 72511100/502 | Ցանցի կառավարման ծրագրային ապահովման ծառայություններ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախապրեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ
Հասցե՝ Ք. Երևան, Պռոշյան 11 /5
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700-17565410100
ՀՎՀՀ04718853

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2025.12.03 16:14:53 AMT

Digitally signed by BAGHDASARYAN ARTAK 4101880220
Date: 2025.12.03 10:44:04 AMT

*Հավելված 3*
*«      »          2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9-1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________________ | ______________________________ |
| ___________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը _______________ | գտնվելու վայրը _________________ |
| հհ __________________________ | հհ_____________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ___________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«      » «             » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________________ | ___________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«     »     2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9-1   ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու)  և ____________-ի
Պատվիրատուի անունը                                    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը  20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

___________________________
ազգանուն, անուն
___________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

___________________________
ազգանուն, անուն
___________________________
ստորագրություն

*Հավելված N 4*

*«      »      2025թ. կնքված*
*ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-26/9-1   ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. __________________________-ի և _____________________-ի միջև «--»   20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը   կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի   միջև  «--»  20  թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

__________________________________________   ____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20  թ.